Սանասար ծեռ տուեց, որին ծեռ տուեց, էն քերոցները ծեռաց մէջ էլաւ խոզ։

36. Աղէն կնաց բէաղարէն տաս խատ էլ առեց իպի։ Սանասար որը ծեռ առեց, ծեռաց մէջ էլաւ խոզ։ Կան էկաւ թաւլի մէջ, տեսաւ որ մէ ճոճ պղնձից շինուած քերոցի պէս մեծ մի պղինձ տրած էտ տեղ, վայրին լցրած մէջ ծիլերոց խամար։ Փայինը դարտրկեց կետին, աղէնը կնաց։

37. Սանասար առաւօտ էլաւ վե, ծիանոց կեարի խատ։ Էն պղինձը առեց ծեռ, ծիլեր թիմարի, որի քեամկի վերէն մէկ տիր պռատեց, կաշինը պլոկուեց, պերեց ոռից խանեց տիւս։

38. Զըմենին էտապէս արաց, ասաց.—Ա՛խպէր, կը տեսնաս, որը ես կը թիմրեմ, էնպէս ըռահաթ կը պարկի ինոր տեղ։ Բաղտասարն ասաց.—Ախպէր, մեր ծին էլ թիմրի։

39. Ասաց.—Կերթամ մեր ծին էլ կը թիմրեմ։

Թիմարեց պրծաւ, էկաւ քնեցին։

Բաղտասար ասաց.—Ա՛խպէր, էլի՛ կնայ, ծիաներ իրիշկի. աղէնը չի կեայ մե մլի[1] տիւս։

40. Սանասար կնաց ծիաներ իրիշկի, տեսաւ, որ զըմմէն պարկեր էն իրա տեղ, իրար չէն առնի[2]։

Սանասար էկաւ ախպօրն ասեց.—Ախպեր, զըմէն պարկեր էն իրար չէն առնի, մինակ մեր ծին ա կայնէ, կեարի կուտի։

41. Խըլըսուն[3] աղէն էկաւ, տեսաւ ծիլերը ոսաղ խատիր էն, կանչեց Սանասարին, ասաց.—Սա ի՞նչ ես արէ։

—Աղա, քերոցիր էմ։

—Ատուծ քիւ տուն աւրի. ոսաղ սպանիր էս ծիլայնը։

—Աղա, խո ես քէ խիանաթ[4] չեմ. մեր ծին էլ քիւ ծիլերու պէս քերոցիր եմ. աղա՛, թէ չես ուզի՛, յըմ յէս աւուր հախ տաս, ես կերթամ։

42. Նա էլ կնաց թակեաւորին ասաց, թէ.—Էսպէս պամ ա ելէ. ի՞նչ անենք էս մարթկանց խետ, էս մարթերք ածրնամ[5] էն։

Թակեաւոր ասաց.—Առաւօտ ինոր կրօխկենք սար, վիշապի խետ կռիւ։ Էս քեաղաք ճիւր չըկայ. ամէն տարի մէկ ախճիկ կը տանք, էտ վիշապ ուտի, որ մեր քեաղաք չաւիրի. մենք էլ ինոր յախու չենք կենայ էրթայ ճիւր պիրի մեզ խամար։

43. Սանասարին ասին.—Էս ախչիկ առէք տարէք, տուէք վիշապին ուտի, ինոր խետ կռուէք։

---

1 Արտաքսել. դուրս մղել։ 2 Զեն շարժուում։ 3. Հետ լուսուն=խետ լուսուն=խըլըսուն=Առաւօտեան։ 4 Թշնամի։ 5 Հսկայ, յաղթանդամ, ուժեղ։